Արձանագրություն N3
ՀՄՄԱԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-82/26 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի
հայտերի գնահատման նիստի

ք. Արմավիր
Շահումյան 3

11.11.2026թ.
ժամը 14^{00}

Նիստին մասնակցում էին՝

Նախագահ՝ Սեթ Վարդանյան
Անդամներ՝ Արթուր Դավթյան
Վահրամ Եղիազարյան
Քարտուղար՝ Արմինե Նավասարդյան

1. Ընթացակարգի հայտերի բացման մասին

Սեթ Վարդանյան

Ընթացակարգը հրապարակվել է 2026 թվականի հոկտեմբերի 22-ին, հոկտեմբերի 29-ին հրավերում կատարվել է փոփոխություն՝ հիմք ընդունելով ՀՀ «Գնումների մասին» օրենքի հոդված 29-ի 4-րդ մասի պահանջները, հայտերի ներկայացման վերջնաժամկետը եղել է 2026 թվականի նոյեմբերի 9-ին ժամը 11^{00}, էլեկտրոնային աճուրդի իրականացման eauction համակարգում աճուրդը սկսվել է 2026 թվականի նոյեմբերի 10-ին ժամը 11^{00}, ավարտվել է նույն օրը ժամը 11^{30}:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Ընթացակարգին հայտերի ներկայացրած կազմակերպությունների մասին

Սեթ Վարդանյան

Ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

ՀՀ	Կազմակերպության անվանումը	Գնային առաջարկ ներկայացրած կազմակերպության էլեկտրոնային հասցեն, հվհհ-ն, հասցեն
1	«Ֆլեքսիբլ Ափլիքեյշնս» ՓԲԸ	էլ.փոստ: marketing@flexap.am հվհհ: 02708088 հասցե: ք.Երևան, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, V20 սենյակ
2	«ԼԼԼ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՍՊԸ	էլ.փոստ: lllmanagment2025@gmail.com հվհհ: 01084956 հասցե: ք Երևան,Աջափնյակ,Ռուստամյան 13/4

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումների մասին

Սեթ Վարդանյան

Էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովի քարտուղարին հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ 26.10.2026թ ստացվել է հարցում, որի հիման վրա հրավերում կատարվել է փոփոխություններ և հրապարակվել հրավերում փոփոխություններ կատարելու մասին հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Տվյալներ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցների հայտերի ընթացակարգի հրավերի պահանջների համապատասխանության մասին

Սեթ Վարդանյան

Նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցներից **«Ֆլեքսիբլ Ափլիքեյշնս» ՓԲԸ** մասնակցի հայտը էլեկտրոնային ստորագրությամբ հաստատելու լիազորությունը վերապահելու մասին տնօրենի կողմից տրված փաստաթուղթը ժամկետանց է:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Ընթացակարգի մասնակիցների ներկայացրած գնային առաջարկների և զբաղեցրած տեղերի մասին

Սեթ Վարդանյան

Չափաբաժնի		Մասնակիցների		Գնման միավորի գինը	Վերջին առաջարկ		
N	անվանումը	զբաղեցրած տեղը	անվանումը		Արժեք	ԱԱՀ	Գին
1	մուտքի հսկողության համակարգ	1	«Ֆլեքսիբլ Ափլիքեյշնս» ՓԲԸ	1100000	1089000	0%	1089000
		Մերժված	«ԼԼԼ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՍՊԸ		5620150	20%	6744180

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

6. Նիստը կասեցնելու և ծանուցում ուղարկելու մասին

Սեթ Վարդանյան

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները նիստը կասեցվում է:

Գնումների համակարգողին. էլեկտրոնային աճուրդի իրականացման համակարգով ծանուցել **«Ֆլեքսիբլ Ափլիքեյշնս» ՓԲԸ** մասնակցին հայտում առկա անհամապատասխանությունների մասին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել դրանք:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

7. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման վայրը, օրը և ժամը հաստատելու մասին

Սեթ Վարդանյան

Հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա 2026 թվականի նոյեմբերի 13-ին ժամը 11^{00}-ին «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում՝ քաղաք Արմավիր, Շահումյան 3 հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ **Սեթ Վարդանյան**

Անդամներ՝ **Արթուր Դավթյան**

Վահրամ Եղիազարյան

քարտուղար՝ **Արմինե Նավասարդյան**